Ծանուցում ՏԱԱԾ խբային հայցի դատական որոշումների մասին

Այս ծանուցումը վերաբերվում է երկու խմբային դատական գործերի նկատմամբ առաջադրված կարգավորմանը՝ տնային առողջպահական աջակցության ծառայությունների մասին (ՏԱԱԾ):

Դատական հայցերի էությունը

2009 թվականին Կալիֆորնիա նահանգն օրենք ընդունեց 30,000 մարդկանց ՏԱԱԾ ծառայությունները դադարեցնելու մասին: Նահանգը պատրաստվում էր կրճատել կերակուր պատրաստելու, տնային մաքրության համար նախատեսված աջակցության ժամերը, ու ևս 100,000 օգտառուների մի շարք այլ ծառայություններ: 2011 թվականին Նահանգը մեկ այլ օրենք ընդունեց 20% -ով կրճատելու էլ ավելի մեծ թվով մարդկանց ՏԱԱԾ ժամերը: (Շահառուների մի մասը կարող էր և ետ ստանալ նախատեսված ծառայությունները, եթե կարողանար ապացուցել, որ տնային օժանդակության բացակայության պայմաններում իրենց լուրջ վտանգ է սպառնում:)

Դեյվիդ Օստերը և ՏԱԱԾ-ի մի շարք այլ շահառուներ, ինչպես նաև ՏԱԱԾ-ի աշխատողների իրավունքների պաշտպան արհմիությունները դատական հայց ներկայացրեցին ՏԱԱԾ-ի ժամերը կրճատելու դեմ: Պատասխանող կողմը նահանգային ատյաններն էին: Դատական գործը գրանցված է *Օսթեր* վերտառությամբ:

2009 թվականին Նահանգը նաև օրենք ընդունեց կրճատելու այն ՏԱԱԾ աշխատողների եկամուտը, ովքեր ժամական $9.50 դոլարից ավելի են ստանում:

ՏԱԱԾ շահառուներն ու աշխատողների պաշտպան արհմիությունները դատական հայց են ներկայացրել նաև աշխատողների ժամավճարի կրճատման դեմ: Պատասխանող կողմը կրկին նահանգային ատյաններն են: Դատական գործը գրանցված է *Դոմինգես* անունով:

Օուքլենդի մի դատարան երկու դեպքում էլ ժամանակավորապես դադարեցրել է 2009 և 2011 թվականի կրճատումները: Նահանգային իշխանությունները վերաքննիչ դատական ատյաններին են դիմել ընթացք տալու գործին ու օրինականացնելու կրճատումների մասին որոշումը: Ոչ ոք չի կարող կանխատեսել, թե վերադաս դատական ատյանները ինչ որոշում կկայացնեն: Ոչ ոք չի կարող կանխատեսել նաև, թե Օուքլենդի դատարանը կկարողանա՞ արդյոք կրճատումները կասեցնել ընդմիշտ:

Դատական որոշումները

Նահանգը համաձայնվել է ազատվել 2009-ի և 2011-ի կրճատումներից: Այս կրճատումները երբեք օրենքի ուժ չեն ստանա:

- ՏԱԱԾ-ի ժամերի 20% կրճատում չի լինելու: 2013 թվականի հուլիսի 1-ից մեկ տարով 8% -ի կրճատում է նախատեսվում: Այս կրճատումը 4.4% -ով պակաս է ներկայիս թույլատրելի ժամերից, քանի որ արդեն իսկ գործում էր 3.6% կրճատում, որ տվյալ դատական հայցի մաս չի կազմում (3.6%+4.4%=8%)
- 2014 թվականի հուլիսից ՏԱԱԾ-ի ժամերի կրճատումը կհասնի 7%-ի: Սա ներառում է ներկայիս 3.6% -ը՝ ավելացրած 3.4% հավելյալ կրճատումը:
- Ձեր հանգամանքների փոփոխության դեպքում լրացուցիչ ժամերի համար կարող եք դիմել շրջանային վարչությանը:
- ՏԱԱԾ աշխատավարձի նկատմամբ նահանգային ֆինանսավորման կրճատում չի նախատեսվում:

Նահանգը համաձայնել է ֆեդերալ ինշխանությունից նոր վերահաշվարկով լրացուցիչ գումար խնդրել ՏԱԱԾ ծրագրի ֆինանսավորման համար: Համաձայնության դեպքում արդեն իսկ 2015 թվականին Նահանգը կարող է դադարեցնել 7% ի կրճատումը:
Սրանք խմբային դատական հայցեր են: Դուք *Օսթեր* դատական գործի մաս եք կազմում այն դեպքում, եթե 2009 կամ 2011 թվականին ծանուցում եք ստացել ՏԱԱԾ-ի կրճատումներ մասին: Եվ *Դոմինգես* հայցի մաս եք կազմում, եթե ՏԱԱԾ շահառու եք և բնակվում եք ներքոհիշյալ աղյուսակում նշված որևէ շրջանում:

Ալամիդա	Կալավերաս	Կոնտրա Կոստա	Ֆրեզնո
Լոս Անջելոս	Մադերա	Մարին	Մարիփոզա
Մենդոսինո	Մոնթերեյ	Նափա	Փլեյսեր
Ռիվերսայդ	Սակրամենտո	Սան Բենիտո	Սան Ֆրանսիսկո
Սան Յոախին	Սան Լուիս Օբիսպո	Սան Մատեո	Սանտա Բարբարա
Սանտա Կլարա	Սանտա Կրուզ	Սոլանո	Սոնոմա
Յոլո	Յուբա		

Իբրև խմբային կարգավորման անդամ այս երկու դատական հայցի մասնակիցները իրավասու չեն առանձին հայց ներկայացնել 8%ի կամ 7% կրճատումների դեմ:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Օսթեր և *Դոմինգես* հայցերի շրջանակում իրավաբանական առանձին խմբեր ներկայացնում են ՏԱԱԾ-ի անդամների խմբային շահերը: Միասնաբար դրանք կոչվում են ՏԱԱԾ կարգավորման իրավաբաններ: Իրավաբանների ցուցակը, կարգավորման համաձայնագրի օրինակը և կարգավորման մասին այլ մանրամասներ կարող եք ձեռք բերել ձեր շրջանային սոցապ բաժանմունքից:

Տեղեկություններ կարող եք ստանալ նաև ձեր շրջանային պետական մարմիններից: Մարամասներին կարող եք ծանոթանալ հետևյալ կայքերից ևս՝
www.disabilityrightsca.org, www.altshulerberzon.com,
www.dss.cahwnet.gov, www.dhcs.ca.gov.

Դատական որոշումների կամ այս ծանուցման մասին տեղեկանալու համար կարող եք

(1) Հաղորդագրություն թողնել ՏԱԱԾ իրավաբանական խմբին՝ 1-866-752-6679 հեռախոսահամարով:
(2) Նամակ ուղարկել ՏԱԱԾ Իրավաբանական կարգավորման գրասենյակ՝ c/o Disability Rights California, Suite 500, 1330 Broadway, Oakland, CA 94612.
(3) Պատգամ ուղարկել **IHSSsettlement@gmail.com.** էլեկտրոնային փոստին:

Եթե այս կարգավորման դեմ առարկություններ չունեք

Ապա պետք չէ ոչինչ ձեռնարկել:

Եթե դեմ եք նշված որոշմանը

Ապա պետք է գրավոր բողոքարկել, թե ինչու եք դեմ: Բողոքարկման վերջնաժամկետն է 2013 թվականի մաիսի 3-ը:

Ձեր առարկությունները հղեք
ՏԱԱԾ կարգավորման իրավաբաններին՝
IHSS Settlement Lawyers, c/o Disability Rights California, Suite 500,
1330 Broadway, Oakland, CA 94612.

Առարկություններն անպայման պետք է ուղարկել մինչև վերջնաժամկետը: Օուքլենդի դատարանը ևս տվյալ կարգավորման մասին նիստ է գումարելու 2013 թվականի մայիսի 24-ին ժամը՝ 14-ին: Նիստի օրը կարող է փոխվել: Խնդրեմ զանգահարեք 1-866-752-6679 կամ մի քանի օր առաջ ճշտեք www.disabilityrightsca.org կայքի միջոցով:
Դատարանի հասցեն է՝

U.S. Federal District Court, Courtroom 2
1301 Clay Street, 4th Floor
Oakland California 94612

Դատական նիստի մասին լրացուցիչ տեղեկություններ կարող եք ստանալ նաև վերոհիշյալ աղբյուրներից:

يمكنك الحصول على هذا الإشعار باللغة العربية.

می توانید این اعلان را به زبان فارسی دریافت کنید.

Տվյալ ծանուցումը կարող եք ձեռք բերել նաև հայերեն լեզվով:

លោកអ្នកអាចទទួលលិខិតជូនដំណឹងនេះជាភាសាខ្មែរបាន។

您還可以得到此通知的中文版本。

본 공지를 한국어로 보실 수 있습니다.

Вы можете получить это уведомление на русском.

Usted puede obtener este aviso en español.

Bạn có thể nhận được thông báo này bằng tiếng Việt.

Maari mong makuha ang punang ito sa Tagalog.

Koj mus muab tau daim ntawv ceeb toom no hais ua lus Hmoob.

You can get this notice in English.